ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1981 թ. ապրիլի 19)

«Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ, թէպէտ և մեռանի՝ կեցցէ» (Յովհ. ԺԱ. 25):

Սիրելի հավատացյալներ, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Զատկական լուսավոր այս օրերին, Փրկչին՝ մեր Քրիստոսի Հարության ավետիսը, հոգեպես միավորում է համայն քրիստոնյա աշխարհը, վկայելու համար միևնույն հավատքը և փառաբանելու հրաշքը աշխարհասասան, երկրպագելով սուրբ խաչի առաջ, որ խորհրդանշում է մահը և անմահությունը Որդվույն Աստուծո:

Հիսուս մեռավ խաչափայտի վրա, աշխարհի վիշտն ու մեղքը Իր վրա վերցրած, բայց և «յարեաւ ի մեռելոց» հաղթելով որոգայթը մեղքի ու չարիքի:

Ու «մահը կուլ գնաց յաղթութեան», ինչպես պիտի բացականչեր Պողոս առաքյալ:

Աստվածային փրկագործության ամբողջ տնտեսությունը հիմնված է Հիսուսի խաչելության և հարության ճշմարտության վրա: Սուրբ խաչը մահից դեպի կյանք տանող կամուրջը հանդիսացավ: Տառապանքի ու մահվան

գործիքը դարձավ ճանապարհ փրկության, ճանապարհ հավերժական կյանքի: Հիսուս Իր զոհաբերումով և մահվան դեմ Իր հաղթությամբ, փրկագործ Իր կնիքը դրոշմեց այս ճշմարտության վրա:

Ահա թե ինչու Պետրոս առաքյալ ցնծում է՝ «Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ի յոյսն կենդանի, ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի». (Ա Պետրոս Ա 3):

«Յոյսը կենդանի», ահա այն անմար կանթեղը որ լուսավորում է մեր հավատքը, որ մխիթարում է մեր հոգիները, որ պայծառակերպում է մեր երկրային կյանքն ու մեր ձեռաց գործերը, որ մղում է տալիս մեր կամքին՝ գործելու ինչ որ բարի է, ինչ որ արդար է, ինչ որ ճշմարիտ է: Մեր հավատքով և մեր բարի գործերով է որ մեզանից ամեն մեկը պիտի կարողանա վառ պահել կանթեղը իր կյանքի կենդանի հույսի, կանթեղը հավիտենական կյանքի հույսի:

Ահա այսօր մեր ուրախությունը, ահա մեր բերկրանքը, երբ մեր սուրբ Եկեղեցին բերում է մեզ մեծագույնը բոլոր ավետիսների, ավետիսը թե՝ «յարեաւ Քրիստոս ի մեռելոց»: «Զի եթէ տնկակից եղեաք նմանութեան մահու նորա, այլև յարութեան նորա լինիջիմք» (Հռոմ. Զ 5):

Սիրելի հավատացյալներ, Հիսուսի Հարության ամեն ավետիս նաև հրավեր է մեզ բոլորիս ուղղյալ, որ մեր հոգիները զարդարենք բարի գործերով և եղբայրական սիրով դեպի մեր նմանները բոլոր, հեռու մնալով չար խորհուրդներից, թշնամանքներից ու եսակենտրոն մղումներից և պես-պես մեղքերից, որոնք վտանգում են, նույնիսկ քանդում՝ մեր հոգիները դեպի փրկություն տանող կամուրջը:

Բազում են որոգայթները չարի, բազում են փորձությունները, որոնք շրջապատում են մեզ մեր կյանքի ճանապարհին, երբեմն խաբեությամբ, երբեմն հրապուրանքներով, երբեմն բռնությամբ: Մեր տկարություններով ու մեր մեղքերով հաճախ մեղանչում ենք Աստուծո դեմ, մեր սեփական մարմնի ու հոգու դեմ, մեր ընտանիքի ու մեր նմանների դեմ, մեր ժողովրդի ու մեր հայրենիքի նկատմամբ:

«Ո՞վ իցէ մարդ որ կեցցէ և ոչ մեղիցէ»: Այո՛, սակայն մարդու կոչումն ու փառքն է, որ իր ազատ կամքով հաղթահարի իր տկարությունները, բավի իր մեղքերը, պայծառակերպի ինքն իրեն և բարի գործերով արդարանա աստվածային դատաստանի առջև, արդարանա հասարակության և իր սեփական խղճի դատաստանի առջև:

Հավատքով ու բարի գործերով արդարանալու ճանապարհին, մարդկանց գերագույն առհավատչյան Հիսուսի Հարության ստուգությունն է: Զի «եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են հաւատքն ձեր», արդարացի կերպով վկայում է Պողոս առաքյալը:

Արդ, մեր Փրկչի Հիսուսի մահվան ու Հարության մեծ խորհուրդը ձեր սրտերում ծրարած, ապրեցեք ու գործեցեք՝ մնալով միշտ հավատարիմ սուրբ Ավետարանի պատգամներին, քրիստոնեական մարդասիրական բարոյականին, մեր առաքելական Մայր Եկեղեցու հոգեշեն ավանդներին:

Եվ մանավանդ, ի տես աշխարհում խմորվող ազգամիջյան հակամարտությունների և սպառազինումների սանձարձակ վազքի, որոնք մեծագույն չարիքներն են հանդիսանում մեր օրերում, մենք հայերս, իբրև Եկեղեցի ու ժողովուրդ, աղոթենք ու գործենք վասն խաղաղ համակեցության երկրագնդի բոլոր ազգությունների, վասն համերաշխ գործակցության բոլոր մեծ ու փո-

բոլոր պետությունների, վասն խափանման ռազմատենչ ոգու և վասն իսպառ խորտակման մահվան գործիքների:

Մենք, իբրև Հայրապետը Հայոց, ծանրորեն մտահոգ և խորապես գիտակից որ համաշխարհային փոթորկումների ժամանակ մահացու հարված են ստանում առավելապես փոքր ժողովուրդները, ինչպես այդ պատահել է մեր ազգի պատմության ընթացքում, Մեր պաղատանքն ու աղոթքն ենք վերառաքում առ Տերն մեր Հիսուս Քրիստոս, Իշխանը Խաղաղության, որ ողորմի համայն աշխարհի ժողովուրդներին, ողորմի մեր բազմաչարչար ազգին, ողորմի մեր վերածնված ու ծաղկող հայրենիքին, և Իր կենարար խաղաղության շունչը իջեցնի պետությունների պատասխանատու ղեկավարների հոգիների ու սրտերի մեջ, արգելակելու համար սանձազերծումը չար ուժերի և ամրացնելու հիմքերը ազգությունների խաղաղ գոյակցության:

Խաղաղության շեփորումով սկիզբ առավ մահվան անդունդի եզրին հասած ու ավերակի վերածված մեր մայր հայրենիքի փրկությունը և վերաշինությունը, խաղաղության իրավիճակում մեր եղբայր ազգությունների մեծ ընտանիքում, վերջին վաթսուն տարիներին մեր երկիրը հզորացավ ու ծաղկեց աննախընթաց թափով՝ իր տնտեսությամբ, իր քաղաքաշինությամբ և իր ազգային մշակույթով: Խաղաղության պայմաններում վերջին տասնամյակներին Հայաստանում վերաշինվեցին և բարեզարդվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու շատ վանքեր և եկեղեցիներ, կազմակերպվեց ու լայնորեն զարգացավ կրոնական կյանքը:

Կայուն ու հարատև խաղաղության պահպանումը միայն կարող են ապահովել մեր ժողովրդի ու հայրենիքի հետագա էլ ավելի զարգացումը և կենսագործումը մեր ազգային բոլոր երազանքների:

Արդ, Մենք ծնկաչոք աղոթում ենք՝ «Խաղաղութիւն հեռաւորաց, խաղաղութիւն մերձաւորաց, խաղաղութիւն ամենեցուն»: Աղոթում ենք մեր ժողովրդի ու հայրենիքի էլ ավելի պայծառ ապագայի համար, մշտատև խաղաղության ու անվտանգության պայմաններում:

Այո՛, հայ ժողովրդի և հայ հայրենիքի անվտանգ գոյատևման ու հարատև հառաջդիմության գերագույն երաշխիքն է՝ ամրապնդումը խաղաղության ամբողջ աշխարհում և մեր վերածնված երկրի սահմանների վրա:

Սիրելի հավատացյալներ, այս խոհերով ու սպասումներով ողջունում ենք այսօր ավետիսը մեր Փրկչի Հիսուսի Քրիստոսի Հարության և մաղթում, որ նրա շնորհները և օրհնությունները առատապես բաշխվեն ձեզ բոլորիդ, որ ապրում եք ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Մաղթում ենք, որ դուք բոլորդ մնաք «լուսոյ որդիներ», հավատարիմ զավակները մեր առաքելական Մայր Եկեղեցու և Սուրբ Էջմիածնի ու միշտ պատրաստ լինեք գործելու ինչ որ բարի է, ինչ որ արդար է ու ինչ որ ճշմարիտ:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց». ամեն: